

**Հենրիկ Բախչինեան, Գրիգոր Նարեկացու Գանձարանը. Վերծանութիւն եւ Քննութիւն, Հրատ.՝ ՀԲԸՄ Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամ, Պէյրուֆ, Տպ. Շիրակ, 2016, 376 էջ:**

Հենրիկ Բախչինեանի աշխատասիրութեամբ 2016ին Բէյրութում ՀԲԸ Միութեան Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի միջոցներով տպագրուել է *Գրիգոր Նարեկացու Գանձարանը. Վերծանութիւն եւ Քննութիւն* ծաւալուն եւ մեծարժէք գիտական աշխատութիւնը: Երախտաւոր միջնադարագէտը Նարեկացու *Գանձարանը* նուիրել է իր հայագէտ ընկերների՝ «վաստակաշատ նարեկացիագէտներ Արշալոյս Ղազինեանի եւ Պօղոս Խաչատրեանի յիշատակին»<sup>1</sup>:

Մեր նպատակն է գիտականօրէն արժեւորել նարեկացիագիտական այս աշխատութիւնը՝ առաջնորդուելով վերլուծական մեթոդաբանութեամբ:

Նարեկացու *Գանձարանի* ուսումնասիրութեան հիմքը Արմէնուի Քէօշկէրեանի աշխատութիւնն է<sup>2</sup>, որի բնագրագիտական քննութիւնը Բախչինեանի կողմից վերանայուել է, ապա գրաբար բնագիրը վերածուել աշխարհաբարի եւ իւրաքանչիւր միաւորի համար գրուել է վերծանութիւն-մեկնութիւն:

«Բնագրային Ծանուցումներ» բաժնում Բախչինեանը գրում է. «Վերակազմել ենք Նարեկացու հեղինակային *Գանձարանը՝ վերանայելով Ա. Քէօշկէրեանի վերակազմած Գանձարանի գանձակազմերի հերթականութիւնը եւ ընդգրկումը*»<sup>3</sup>: Իսկ ներածութեան մէջ հեղինակը գրում է. «Նպատակայարմար ենք գտել գանձերը փրոհել ըստ դրուագների, իսկ փաղերն՝ անջատել փոխերից եւ այդ բնագրային միաւորներին կից փալ մեր վերծանութիւնները, որոնք ընդգրկում են դրանց աշխարհաբար արծակ վերածումները, բովանդակային մեկնութիւններն ու ծանօթագրութիւնները»<sup>4</sup>:

Բնագրերի ընտրութեան այս մեթոդն ունի եւ առաւելութիւն, եւ թերութիւն: Թերութիւնն այն է, որ ասես աղճատում են Նարեկացու տաղերի եւ գանձերի բնագրային միաւորները, սակայն առաւելութիւնն այն է, որ տրոհուած այդ միաւորների կողքին ուղղակի ներկայացուող աշխարհաբար վերածումներն ու վերծանումները, ինչպէս նաեւ դրանց ծանօթագրութիւնները նպաստում են բնագրի ճիշտ ընկալմանը:

Գիրքը կազմուած է մուտքից, ներածութիւնից, *Գանձարանի* վերծանութիւնից, արտագանձարանային տաղերից, *Գանձարանի* քննութիւնից, բնագրային ծանուցումներից, գանձերի, տաղերի եւ անկախ փոխերի այբբէնական ցանկից, անուանացանկից, համառօտագրութիւններից:

Մուտքի մէջ հեղինակը իրաւամբ գրում է, որ «Գրիգոր Նարեկացու փաղերի զգալի մասը չափազանց դժուար ընկալելի է յարկապէս

ժամանակակից ընթերցողի համար: Պատճառը, նախ եւ առաջ, բանաստեղծի լեզուաոճական համակարգն է»<sup>5</sup>: Հենց այս նպատակով էլ հեղինակը ձեռնարկել է իր գործը, որպէսզի մասնագէտների, ուսանողների եւ առհասարակ ընթերցողի համար մատչելի դարձնի Նարեկացու գրական ժառանգութեան խնդրոյ առարկայ մասը: Բախչինեանի համար ուսանելի օրինակ է դարձել Գէորգ Աբգարեանի կատարած մի տաղի վերծանութիւնը<sup>6</sup>: Հեղինակը համառօտ ներկայացնում է իր աշխատութեան կառուցուածքային սկզբունքները, ապա միջնադարեան գրչի հանգոյն նշում. «Հատորում, անշուշտ, կը լինեն թերի վերծանութիւններ կամ վերծանման թերութիւններ, ինչպէս նաեւ վիճելի կամ վիճայարոյց կարծիքներ ու մեկնաբանութիւններ: Այդուհանդերձ, մեր այս աշխատանքը փորձ է՝ թափանցելու Գրիգոր Նարեկացու հեղինակային Գանձարանը, որը բառի բուն իմաստով գանձարան է՝ լի հոգեւոր թաքնուած գանձերով...»<sup>7</sup>:

Ներածութեան մէջ անդրադարձ կայ Նարեկացու Մատենաձի սեռի բնոյթին: Այս խնդրի շուրջ հայագիտութեան մէջ եղել են տարբեր կարծիքներ, որոնցից հեղինակն անդրադառնում է Ա. Բահաթեանի, Ստեփանոս Մալխասեանցի, Մանուկ Աբեղեանի, Արշալոյս Ղազինեանի, Հ. Միրզոյեանի կարծիքներին, սակայն անտեսում է Պօղոս Խաչատրեանի<sup>8</sup> եւ Զ. Աւետիսեանի<sup>9</sup> կարծիքները:

Ներածութեան մէջ հեղինակը գրում է. «Ինչպէս ժամագրքային աղօթքի հիման վրայ Նարեկացին ստեղծել է նոր՝ բանաստեղծական աղօթքի ժանրը, այնպէս էլ ժամագրքային քարոզը նախօրինակ ունենալով՝ ստեղծել է նոր՝ գանձի կամ բանաստեղծական քարոզի ժանրը»<sup>10</sup>: Բախչինեանն անդրադառնում է նաեւ **ժամագրքային աղօթքի, քարոզի, երգի** սեռերին, ապա **գանձի, շարականի, տաղի, փոխի, մեղեդու** սեռերին: Գրկանագէտը գրում է. «Նարեկացու Գանձարանը բաղկացած է գանձ-տաղ-փոխ միաւորներից, որոնք կոչւում են գանձարանային կանոն կամ գանձ-շարք. մենք առաջարկում ենք գանձակազմ եզրոյթը»<sup>11</sup>: Բախչինեանի առաջարկած այս եզրոյթը մեզ համար սկզբունքօրէն անընդունելի է, քանզի միջնադարեան գրական տեսակների որոշման հարցում չպիտի առաջնորդուել նորօրեայ գրական պատկերացումներով: Ինչպէս գրում է ռուս տեսաբան Բ. Տոմաշեւսկին, սեռերի դասակարգումը «միշտ պատմական է, այսինքն՝ արդարացի է միայն որոշակի պատմական պահի համար»<sup>12</sup>:

Մեզ համար կարեւոր է մի հանգամանք, որ գրական տեսակների խնդիրը պարտադիր պէտք է քննարկուի պատմական հայեացքով՝ հաշուի առնելով դրանց ծագումը, զարգացումը եւ յետագայ ընթացքը: Յետադարձ հայեացքով չի կարելի քննել որեւէ գրական սեռ, ինչպէս արուել է Նարեկացու Մատենանը պոէմ անուանուելու դէպքում, երբ միջնադարում պոէմ սեռի հասկացութիւն չի եղել առհասարակ: Ի դէպ, դա

չի ընդունում նաեւ Բախչինեանը գրախօսուող գրքում՝ *Մատենի* սեռը համարելով բանաստեղծական աղօթքը՝ «Բան աղօթից»<sup>13</sup>: Այդ դէպքում անտեսում է գրական սեռերի ծագումը, եւ հանդէս ենք բերում ոչ պատմական մօտեցում: Այս սկզբունքի պաշտպանն է նաեւ Խաչատրեանը. «*Երբ հայ հին գրականութեան այս կամ այն երկը ներկայացում է ժամանակակից ժանրային որեւէ անուան փակ, որ իբրեւ այդպիսին անցեալում չի գիտակցուել, դրանով իսկ միջնադարի հայ հեղինակը յանիրաւի դրում է ոչ պատշաճ վիճակի մէջ. սրացում է, որ ասենք, նա գրել է պոէմ՝ առանց իմանալու, թէ ինչ ժանրի գործ է յօրինել»<sup>14</sup>:*

«Նարեկացին, ինչպէս համակարգելով իր բանաստեղծական աղօթքները՝ կազմել է իր անհատական, հեղինակային Աղօթամատենը, այնպէս էլ սրեղծել է իր հեղինակային Գանձարանը»՝ իրաւացիօրէն գրում է Բախչինեանը՝ նոր հայեացքով ընկալելով եւ մեկնաբանելով Նարեկացու *Մատենի* սեռի բնոյթը<sup>15</sup>, ապա փաստում, որ *Ժամագիրքի* եւ *Շարակնոցի* կողքին Նարեկացին ստեղծում է իր արտապաշտամունքային, արտականոնային անհատական ժողովածուները՝ հեղինակային *Աղօթամատենը* եւ *Գանձարանը*<sup>16</sup>:

Հայագիտութեան մէջ Նարեկացու տաղերի, գանձերի, փոխերի, մեղեդիների սեռի քննութիւնը կատարել է Քէօշկէրեանը<sup>17</sup>, թէեւ մինչ այդ էլ դրանք կարելորուել են: Նարեկացու *Մատենի* կողքին երբեմն ստուերուել են, սակայն, իսկապէս անչափ բարձրարժէք նրա քնարերգութեան փոքր ձեւերը՝ տաղերը, մեղեդիները, յորդորակները, փոխերը եւ գանձերը, որոնք էական նշանակութիւն են ունեցել հայ միջնադարի աշխարհականացման մտաւոր շարժման գործում: Ճիշտ այսպէս է խնդրին մօտեցել Մատթէոս Ջուլայեցին (ԺԵ. դար), երբ գրել է. «*Մին փոխ Նարեկացի լաւ է, քան զամենայն Սաղմոսս Դաւթի...*»: Նարեկացիագիտութիւնն ըստ արժանւոյն է գնահատել բանաստեղծի տաղերը՝ գտնելով, որ «*երբեք հայ միտքը ինքզինքը այնչափ նրբօրէն բանաստեղծ, այնչափ էականապէս արուեստագէտ չէր յայտնած, որչափ այդ տաղերուն քանի մը տողին մէջ*»<sup>18</sup>:

Գրախօսուող գիրքը գալիս է նորովի արժեւորելու Նարեկացու ստեղծագործութեան փոքր ձեւերը:

Հայ բանասիրութեան մէջ Նարեկացու ստեղծագործութիւնը ներկայացուել է միակողմանիօրէն. «*Նարեկացու լաւագոյն տաղերը թէպէտ արտաքուստ դեռ որոշ կրօնական թեմաներ են ակնարկում, բայց դրանք իրենց գաղափարական էութեամբ հոգեւոր բանաստեղծութիւններ չեն*»<sup>19</sup>: Սակայն ինչպէս արդէն նկատուած է, Մկրեանը Նարեկացու ստեղծագործութեան քննութիւնը տանում էր աշխարհիկ միտումների ծայրայեղ ընդգծման եւ բեւեռացման ուղիով. մի մօտեցում, որ, անշուշտ, չէր արտայայտում բուն ճշմարտութիւնը Նարեկացու մասին, միակողմանի էր, բայց պար-

տադրուած էր 1930-40ականների քաղաքական գաղափարական խեղդիչ մթնոլորտով<sup>20</sup>:

Ժ. դարում հայ քնարերգուքինն իր թիկունքին ունէր հոգեւոր բովանդակութեամբ, կաղապարուած պատկերներով շարականներ, մինչ աշխարհիկ քնարերգութիւնը մշտապէս հնչում էր գուսանների շուրթերին: Վերջիններիս ազդեցութիւնը մեծ է Նարեկացու ե՛ւ տաղերի, ե՛ւ *Մատենի* վրայ: Նարեկացին փոխել է հոգեւոր երգերի պատկերային համակարգը, սակայն բովանդակութիւնը եղել եւ մնում է հոգեւոր, ո՛չ՝ աշխարհիկ, ինչպէս կարծել է Մկրեանը:

Գրախօսուող գրքում իր արժանի տեղն ունի *Գանձարանի* գրականագիտական քննութիւնը: *Գանձարանի* առանցքն իրաւամբ համարելով **աստուածերգութիւնը՝** Բախչինեանը կարեւորում է նրա խորհրդաբանութիւնը՝ Նարեկացուն անուանելով հայ խորհրդաբանական քերթութեան հիմնադիրը<sup>21</sup>:

Անդրադառնալով Նարեկացու «Ի Սիրոյ Ծանուցեալ,/ Սիրաբողբոջ տարվմամբ լըցեալ, Սիրով ընդ սէր միաբանեալ» տողերին՝ Բախչինեանը գրում է. «Այս տողերը կարող են ընկալուել իբրեւ պարզ սիրերգութիւն: Անշուշտ, սա սիրերգութիւն է, սակայն՝ աստուածերգութեան ոլորտում, եւ, ըստ այդմ **Նարեկացին հոգեւոր սիրերգութեան հիմնադիրն է հայ քերթութեան մէջ**»<sup>22</sup>:

Նարեկացու *Գանձարանի* «Յահել Քում Գալըստեանդ ատուր՝/Առ Հայր վերացո զմեզ լըրմամբ սիրոյ.../Հայցեա՛ միանալ ընդ Քեզ՝ Քեւ ընդ սիրոյ Հօր եւ Հոգւոյդ» տողերի դիպուկ գնահատականն է Բախչինեանի դիտարկումը. «Սա միստիկ-բանաստեղծի թէ՛ Ողբերգութեան *Մատենի*, թէ՛ *Գանձարանի* գաղափարական կիզակէտն է»<sup>23</sup>: Երկու դէպքում էլ Նարեկացին ձգտում է միանալ աստուածային էութեանը:

Ինչպէս գրում են Նարեկացու աշխարհայեացքի քննութեան հեղինակները, Նարեկացին հաւատում է, որ «մարդը սկզբունքօրէն կարող է դառնալ կատարեալ մարդ՝ *Մարդ-աստուած*»<sup>24</sup>: Դեռեւս Աբեղեանն է նկատել, որ «Քրիստոնէական միստիցիզմը թէ՛ տեսականօրէն եւ թէ՛ գործնապէս կատարեալ արտայայտութիւն են գտել մեր բանաստեղծի մէջ: *Մարդու անձնաւորութիւնը, միանալով Աստուծու հետ, բոլորովին չի կորցնում իր առանձնութիւնը եւ չի ոչնչանում՝ լուծուելով աստուածութեան մէջ, այլ նրա հետ եւ նրան հաւասար ունենում է անճառելի լոյսի մէջ՝ անվախճան «փառք վայելչութեան», «անդորրութիւն կենաց հանգստեան».* մարդն Աստուծու մէջ եւ Աստուած ինքը մարդու մէջ»<sup>25</sup>:

Նարեկացու խորհրդաւորութեան մէջ է նրա ստեղծագործութեան մեկ-նաբանման բանալին, ինչը լաւագոյնս գիտակցել է նաեւ Բախչինեանը:

Նարեկացու ստեղծագործութեան փոքր ձեւերի քննութեան համար արժանին պիտի մատուցենք նաեւ Քէօշկերեանին, Ղազինեանին, Խաչատր-

եանին, որոնց ուսումնասիրութեան արդիւնքում յստակեցում են տաղերի, գանձերի եւ այլ տեսակների սեռակերտ առանձնայատկութիւնները:

Գանձը հին քարոզի հիմքի վրայ ստեղծուած պատմողական-նկարագրական բնոյթի ստեղծագործութիւն է, որն ունի կայուն ծաւալ, կրկնակ տողեր, պարտադիր տողեր («եւ եւ», «գանձինս», «ողորմեաց»): Վերջում էլ պարտադիր են «Աղաչեմք, հայցեմք, խնդրեմք» բառերը, որոնցով հայցում է սրբերի բարեխօսութիւնը: Գանձը նուիրուած է տէրունական տօներին, սրբերին, իսկ մաղթանքները կցւում են գանձի վերջին: Գանձն ունի ծայրակապ, եւ կատարուել է ասողական եղանակով («ի թիւ կարդալ», «ի ծայն ասել», «ոգել ծայնի»): Գանձը *էպիկական* է, ձգտում է տալ բուն նիւթի բովանդակութեան շարադրանքը: Այլ են տաղերը, որոնք նոյն նիւթը վերարտադրում են կենդանի պատկերներով, յուզականութեամբ եւ երաժշտականութեամբ՝ խուսափելով նիւթի էպիկական մանրամասնութիւնից, ընդգծելով զգացական յոյզը: Այստեղ խօսքը վերաբերում է Նարեկացու տաղերին, որոնք որոշակիօրէն տարբեր են միջնադարեան աշխարհիկ տաղերգութեան նմուշներից: Ծիշտ է դիտուած, որ տաղը «*քնարական բանաստեղծութիւն է, որը հոգեւոր երգերի շարքում յաջորդել է գանձին, ունեցել է նոյն թեման, բայց իր ծայնեղանակը: Աշխարհիկ տաղերն անկախ են արարողակարգից եւ իբրեւ խոհա-քնարական բանաստեղծութիւն յարատեւում են մինչեւ այսօր*»<sup>26</sup>:

Նարեկացու *Գանարան*ում կան նաեւ **փոխ** անուանուած տեսակներ, որոնց մասին Ղազինեանը գրում է. «Նարեկացու գանձերն ու տաղերը ունեն փոխեր, որոնք կարող են լինել թէ՛ առանձին երգեր եւ գանձի, տաղի, մեղեդու հեղ կազմել մի ամբողջութիւն եւ թէ՛ գանձի կամ տաղի հասկումներ՝ պայմանաւորուած ծայնեղանակի փոփոխման հեղ: Գանձարանային միատրոնների շարքում փոխերը ունեն նոյն թեման, ինչ գանձը»<sup>27</sup>:

Փոխերին յաջորդել են նաեւ **մեղեդիները**, որոնց ժանրային բնութագիրը դեռեւս յստակ չէ, սակայն պարզ է, որ գանձարանային այս բոլոր սեռերը, որոնք չեն տարբերակուում գրական յատկանիշներով, արտագրական կիրառութեան՝ ժամերգութեան մէջ, նաեւ ծայնեղանակներով ու կատարման արուեստով տարբերուել են:

Գանձից ու տաղից բացի հանդիպում ենք **փոխ, մեղեդի, յորդորակ** անուանուած գանձարանային միատրոնների, որոնց սեռի հարցը կարօտ է նոր տեսական ուսումնասիրութեան: Նարեկացու տաղերը եւ գանձերը թէ՛ ձեւով եւ թէ՛ պատկերային համակարգով նորութիւն են հայ գրականութեան մէջ: «Գանձ» եւ «տաղ» սեռերի ծունդը կապուում է Նարեկացու անուան հետ, թէեւ «տաղ» բառը յայտնի է դեռեւս Ե. դարից՝ Դիոնիսիոս Թրակացու քերականութեան արուեստի թարգմանութեան եւ մեկնութիւնների մէջ: Քերականութեան «Յաղագս Վերծանութեան» գլխում, Թրակացին գրում է. «...*զի ողբերգութիւն դիւցազնաբար վերծանեսցուք. իսկ կարակերգութիւն՝ աշխարհօրէն. եւ զդամբանականն՝ ուժգնակի. զտաղն՝*

քաջուղորակի. եւ զքնարական քերթութիւն՝ ներդաշնակապէս. եւ զխանդաղապականն՝ թուլակի, եւ աշխարապէս. զի որք ոչ լսողայցն լինին խարութեանց՝ զքերթողացն արութիւնսն տապալեն, եւ զոյնս վերձանողացն ծիծաղելիս յարկացսցեն»<sup>28</sup>: Արդ, թէեւ դեռեւս Ե. դարում գործածուել է տաղ եզրոյթը, սակայն միջնադարի հայ քնարերգութեան մէջ այնքան շոայլօրէն օգտագործուած տաղի սեռը սկզբնաւորել է Նարեկացին:

Նկատի ունենալով Նարեկացու Վարդավառի տաղը՝ Բախչինեանն իր քննութեան մէջ ինքնատիպ մօտեցում է հանդէս բերում՝ գրելով, թէ «աստուածերգութեան ոլորտում ծնունդ է **բնութեան երգը**»<sup>29</sup>:

Այս տաղի խորհրդաբանութեան մեկնութեան շուրջ արժանին մատուցելով Բախչինեանին՝ հաստատենք, որ դեռեւս 2000ին տողերիս հեղինակը *էջմիածին* ամսագրում անդրադարձել է տաղի խորհրդաբանութեանը՝ գրելով. «Մ. Արեղեանից սկսած, որը «բացի վերնագրից եւ վերջին երկու տողից՝ ոչինչ կրօնական» չի տեսնում, փառս ներկայացնում են միակողմանիօրէն՝ անտեսելով հոգեւոր իմաստը, բացարձակացնելով «նրա աշխարհիկ ոգին»»<sup>30</sup>: Վերոյիշեալ յօդուածում նաեւ գրել ենք, որ «Սուրբ Երրորդութիւնը՝ Արեգակը, վարդը եւ ամպը, գտնուում են յափտենական կապի մէջ: Այլ կերպ՝ ողջ բնութիւնը ողողուած է աստուածային լոյսով, որն էլ կենդանութիւն է փայլիս ծառ ու ծաղկին, աստղ ու լուսնին, հով ու շաղին: Անտեսանելի Աստուած տեսանելի է դառնում բնութեան միջոցով. այս է միստիկ Նարեկացու աշխարհայեացքային ելակէտը: Հետեւաբար բնութեան փառաբանութիւնը հասցէգրուում է Աստուծուն, եւ առաջնայինը Նարեկացու համար հոգեւոր իմաստն է»<sup>31</sup>:

Հաստատենք, որ ծաղիկ-առաքեալների, ոստ-մարտիրոսների, աստղ-առաքեալների, լուսին-Աստուածածնի խորհրդաբանութեանն անդադարձել է Բախչինեանը, մինչդեռ մեզ հետաքրքրողը եղել է Սուրբ Երրորդութիւնը՝ Հայր-Արեգակը, Որդի-վարդը, Սուրբ հոգի-ամպը, քանի որ «Թէեւ փաղը «Վարդավառին» է նուիրուած, սակայն Քրիստոսին ձօնուած մի ներքող է (օղա, դիֆտերամբ, ձօն) եւ մեր Մատենադարանի թիւ 427 ձեռագրի գրիչ Ստեփաննոսը (ԺԵ. դար) փաղը խորագրում է «գովեստ», որը համարում է միջնադարեան տաղի ժանրային տեսակ»<sup>32</sup>:

Ի դէպ, վերոյիշեալ յօդուածում Վարդավառի տաղի հայրենային տաղաչափութեան պահանջով եւ Քէօշկերեանի կազմած գիտաքննական բնագրի տարընթերցումների հաշուառմամբ նաեւ չորս ուղղում ենք կատարել տաղի գիտաքննական բնագրում, որը, ցաւօք, չի նկատուել Բախչինեանի կողմից:

Բախչինեանը իրաւամբ բարձր է գնահատել նաեւ Աստուածածնի տաղը՝ գրելով, որ այն «Նարեկացու մարիամերգութեան եւ մարդերգութեան գլուխգործոցն է: Այստեղ միաժամանակ պատկերուած է երկնային ու երկրային էակը, Քրիստոսով լցուած, ոգեղէնացուած ու գեղեցկացած

մարդը՝ կանացի զմայլելի կերպարանքով: Սրանից յեւրոյ ընդամենը մէկ քայլ էր մնում մինչեւ լիովին երկրային կնոջ պատկերումը»<sup>33</sup>:

Ամփոփելով՝ Հենրիկ Բախչինեանի նարեկացիագիտական այս նոր աշխատութիւնը զալիս է նորովի լրացնելու հայագիտութեան մեծ երախտաւորի՝ երեք տասնեակից անելի հայագիտական գրքերի շտեմարանը: Գիրքն ունի բանասիրական, գրականագիտական, բնագրագիտական, թարգմանական լուրջ արժէք եւ իր պատուաւոր տեղը կ'ունենայ նարեկացիագիտութեան դարաւոր պատմութեան մէջ:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Հ. Բախչինեան, *Գրիգոր Նարեկացու Գանձարանը. Վերծանութիւն եւ Քննութիւն*, Հրատ. ՀԲԸ Միութեան Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամ, Պէյրութ, Տպ. Շիրակ, 2016, էջ 3:
- <sup>2</sup> Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ Գանձեր*, աշխ.՝ Ա. Քէօզկերեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱԱ Հրատ., 1981:
- <sup>3</sup> Բախչինեան, էջ 341:
- <sup>4</sup> Նոյն, էջ 10:
- <sup>5</sup> Նոյն, էջ 7:
- <sup>6</sup> Գ. Աբգարեան, «Վերծանութիւն Գրիգոր Նարեկացու «Յարութեան Տաղի», *Էջմիածին*, 1974, թիւ Ա., էջ 42-48, թիւ Բ., էջ 39-48:
- <sup>7</sup> Բախչինեան, էջ 10:
- <sup>8</sup> Պօղոս Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ Հայոց Միջնադարը*, Էջմիածին, Ս. Էջմիածին Հրատ., 1996:
- <sup>9</sup> Զ. Աւետիսեան, *Նարեկացու Մատենանք*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2005:
- <sup>10</sup> Բախչինեան, էջ 19:
- <sup>11</sup> Նոյն, էջ 27:
- <sup>12</sup> Б. Томашевский, Теория литературы. Поэтика (Բ. Տոմաշեւսկի, Գրականութեան տեսութիւն. պոէտիկան), Մոսկուա-Լենինկրատ, 1928, էջ 162. նաեւ՝ Ա. Զրբաշեան, *Գրական Սեռեր եւ Ժանրեր*, Երեւան, Անտենոր տպարան, 2015, էջ 42-43:
- <sup>13</sup> Բախչինեան, էջ 17:
- <sup>14</sup> Պ. Խաչատրեան, *Հայ Միջնադարեան Պատմական Ողբեր*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 19:
- <sup>15</sup> Բախչինեան, էջ 26:
- <sup>16</sup> Նոյն, էջ 28:
- <sup>17</sup> Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ Գանձեր*:
- <sup>18</sup> Ա. Զօպանեան, *Երկեր*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 319:
- <sup>19</sup> Մ. Մկրեան, *Երկեր, Հտր. 1*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1987, էջ 456:
- <sup>20</sup> Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ Հայ*, էջ 6:
- <sup>21</sup> Բախչինեան, էջ 254:
- <sup>22</sup> Նոյն, էջ 266:

---

<sup>23</sup> Նոյն:

<sup>24</sup> Հ. Դալթեան, Է. Լալայեան, *Նարեկացու Աշխարհայեացքը*, Երեւան, Վան Արեան հրատարակչատան տպարան, 2003, էջ 48:

<sup>25</sup> Մ. Աբեղեան, *Երկեր*, Հտր. Գ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 590:

<sup>26</sup> Ա. Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական Արուեստը*, Անթիլիաս-Լիբանան, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1995, էջ 101:

<sup>27</sup> «Քերականութիւն Դիոնեսիոսի Թրակացոյ», Փարիզ, 1824, էջ 6:

<sup>28</sup> Բախչինեան, էջ 282:

<sup>29</sup> Վ. Եղիազարեան, «Գրիգոր Նարեկացու «Վարդավառի» Տաղը», *Էջմիածին*, 2000, Բ, էջ 75:

<sup>30</sup> Նոյն, էջ 77:

<sup>31</sup> Նոյն:

<sup>32</sup> Բախչինեան, էջ 300:

ՎԱՆՕ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ  
vano.exiazaryan@mailru